ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N PHI/Ijevan Univ 2019

ք. Երևան 2 դեկտեմբերի 2019 թ.

Փրոջեքթ Հարմոնի հայկական մասնաճյուղը, այսուհետ՝ Ծրագիր իրականացնող, ի դեմս տնօրեն Մարիամ Մարտիրոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության և լիազորագրի հիմա վրա, մի կողմից, և **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը, այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ**, ի դեմս մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Անուշավան Մակարյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, **երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր**, կնքեցին սույն Պայմանագիրը, **այսուհետ՝ Պայմանագիր** հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը համաձայնվում են այն մասին, որ ԵՊՀ ԻՄ-ն **2019թ. դեկտեմբերի 2-ից մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը** Ծրագիր իրականացնողին՝ «Տավուշում կրթական-տեղեկատվական դասընթացներ ծրագիր»-ը (AM Tavush Outreach Program, դրամաշնորհային պայմանագիր SAM10019CA0074) իրականացնելու նպատակով տրամադրում է անհրաժեշտ տարածք՝ ԵՊՀ ԻՄ–ում **«Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն» (այսուհետ՝ Կենտրոն) ստեղծելու և այնտեղ Իջևան համայնքի համար Հավելված 1-ով սահմանված կրթական-տեղեկատվական միջոցառումները կազմակերպելու համար:**

2. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 ԵՊՀ ԻՄ-ը պարտավոր է.

2.1.1 Ծրագիր իրականացնողին տրամադրել Ուսանողական 3 հասցեում գտնվող մասնաշենքի առաջին հարկում գտնվող 63.56 (11.35 x 5.6) քառ. մետր ընդհանուր տարածքով 12-րդ ազատ լսարանը՝ որը կծառայի որպես Ծրագրի իրականացման մշտական վայր և որպես Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն:
2.1.2 Թույլատրել Ծրագիրն իրականացնողին կատարել մասնակի վերանորոգման աշխատանքներ սենյակում և հարակից տարածքում, սենյակի մոտ փակցնել Ծրագրի անվամբ, Ծրագիրը ֆինանսավորողի և իրականացնողի անվամբ ցուցանակ, կահավորել սենյակը, հագեցնել օդորակիչով, համակարգչային տեխնիկայով և ինտերնետային կապով:
2.1.3 Թույլատրել Ծրագիրն իրականացնողին Ուսանողական 3 հասցեում գտնվող մասնաշենքի մուտքի մոտ պատի վրա փակցնել Կենտրոնի պաստառ:
2.1.4 ԵՊՀ ԻՄ-ի շենքի ընդհանուր անվտանգության միջոցառումների շրջանակում ապահովել նաև Կենտրոնի անվտանգությունը:
2.1.5 Հոգալ Կենտրոնի մաքրության, ինչպես նաև դրա գործունեության արդյունքում առաջացած կոմունալ վճարները:
2.1.6 Թույլատրել Ծրագրի շրջանակներում ստեղծված Կենտրոնի համակարգողներին, ինչպես նաև Ծրագրի միջոցառումներին հրավիրված սեմինարավարներին և այլ խոսնակներին Ծրագիր իրականացնողի հետ համակարգված գրաֆիկով վարել Ծրագրի դասընթացները և կազմակերպել շահառուների սոցիալական հմտությունների և ընդհանուր զարգացմանը միտված միջոցառումները:
2.1.7 Թույլատրել Ծրագիրն իրականացնողին և Կենտրոնի համակարգողներին ըստ անհրաժեշտության տեղական լրատվամիջոցների ներկայացուցիչներին հրավիրել Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն՝ լուսաբանման աշխատանքների նպատակով:

2.2 Ծրագիրն իրականացնողն պարտավոր է.

2.2.1 Վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին և կարգին համապատասխան:
2.2.2.Կատարել մասնակի վերանորոգման աշխատանքներ կենտրոնում և հարակից տարածքում, կենտրոնի մոտ փակցնել Ծրագրի անվամբ, Ծրագիրը ֆինանսավորողի և իրականացնողի անվամբ ցուցանակ, կահավորել կենտրոնը, հագեցնել անգլերեն գրականությամբ, տեխնիկայով, ինտերնետային կապով և, հնարավորության դեպքում, անվտանգության տեսախցիկով:
2.2.3 Իջևան քաղաքից ընտրել Կենտրոնի 2 համակարգող, վերջինների հետ կնքել Ծառայությունների մատուցման պայմանագիր Կենտրոնի գործունեությունը տեղում կազմակերպելու և Տավուշի մարզում որպես Ծրագիրն իրականացնողի ներկայացուցիչներ հանդես գալու համար, և համապատասխանաբար վճարել նրանց մատուցված ծառայությունների համար:
2.2.4 Ծրագրի իրականացման համար Ծրագիր իրականացնողին տրամադրված սենյակի համար Համալսարանին վճարել ամսական կտրվածքով, Կողմերի միջև ռեսուրսների տրամադրման և օգտագործման համապատասխան ակտը ստորագրելուց հետո ծառայության մատուցման ամսվան հաջորդող 10 օրերի ընթացքում ստորագրելուց հետո, ամենաուշը 5 օրվա ընթացքում:
2.2.5 Համալսարանի ղեկավարության հետ կանոնավոր կերպով քննարկել Կենտրոնի գործունության ընթացքը, նախատեսվող միջոցառումների գրաֆիկը և խորհրդակցել համայնքի բնակչության շրջանում կենտրոնի վարկանիշի բարձրացման, նախաձեռնված աշխատանքների իրագեկման և կազմակերպվող դասընթացներում նոր շահառուների ներգրավման հարցերի շուրջ:
2.2.6 Կենտրոնի սարքերի խափանման դեպքում, հոգալ դրանց վերականգնման, գործունակության ապահովման և տեխնիկական վերազինման հարցերը:

2.3. ԵՊՀ ԻՄ-ն իրավունք ունի.

2.3.1. Ծրագիր իրականացնողից պահանջել տարածքը օգտագործել սույն պայմանագրի պայմաններին համապատասխան:
2.3.2. Ծրագիր իրականացնողի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում պահանջել վաղաժամկետ լուծել պայմանագիրը:
2.3.3. Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Ծրագիր իրականացնողը տարածքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ տարածքի նշանակությանն անհամապատասխան:

2.4. Ծրագիր իրականացնողն իրավունք ունի.

2.4.1. Պահանջել ԵՊՀ ԻՄ-ից իրեն օգտագործման համար տրամադրել պայմանագրով նախատեսված տարածքը:

3. ՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

3.1 Ծրագիր իրականացնողի կողմից Կենտրոնի գործունեության յուրաքանչյուր ամսվա համար ԵՊՀ ԻՄ-ին վճարվելիք ամսավճարը կազմում է 43,000 ՀՀ դրամ գումար:
3.2 Ծրագիր իրականացնողը սահմանված ամսավճարը վճարում է ԵՊՀ ԻՄ-ին վերջինիս կողմից տրամադրված բանկային հաշվեհամարին՝ փոխանցում կատարելու միջոցով, Կենտրոնի գործունեության յուրաքանչյուր ամսվան հաջորդող 5 օրերի ընթացքում Կողմերի միջև Փոխադարձ պայմանավորվածությունների իրագործման ակտը երկկողմանիորեն ստորագրելուց հետո 10 օրվա ընթացքում:

3.3 **Ծրագիր իրականացնողը սույն Պայմանագրի հետ կապված չի կրում որևէ հարկային պարտավորություն:** ԵՊՀ ԻՄ-ն սույն պայմանագրով ստացած գումարներից պարտավոր է վճարել ՀՀ օրենսդրությանը համապատասխան ծագող հարկերը, եթե այդպիսիք առաջանում են:

3.4 Ծրագիր իրականացնողն իր հայեցողությամբ կարող է Ծառայություն մատուցողին կատարել կանխավճարներ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1 Սույն Պայմանագիրը գործում է **2019թ. դեկտեմբերի 2-ից և վավեր է մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ:**

4.2 Պայմանագրի ժամկետը Ծրագրի հաջորդ տարիների համար համապատասխանաբար կերակարացվի՝ Ծրագիր իրականացնողի կողմից Կենտրոնի գործունեության յուրաքանչյուր տարվա համար առաջարկվող միջոցառումների ցանկը նախապես ԵՊՀ ԻՄ-ի հետ քննարկելով և համաձայնեցնելով:

4.3 Սույն Պայմանագիրը կարող է ժամկետից շուտ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ այդ մասին մյուս կողմին առնվազն 20 օր առաջ նախազգուշացնելով: Ցանկացած փոփոխություն սույն Պայմանագրին հնարավոր է միայն Կողմերի երկուստեք համաձայնությամբ, դրանք գրավոր կերպով վավերացնելով:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Սույն Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

6.1 Ծրագիր իրականացնող՝

Մարիամ Մարտիրոսյան
«Փրոջեքթ Հարմոնի» հայկական մասնաճյուղի տնօրեն

Պարոնյան 8/8 **(գրանցման հասցե)** 0015, Պռոշյան 2/2 **(գործ. հասցե),** ք. Երևան, ՀՀ,
Հ/Հ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 15700 24709020100 ՀՀ դրամ
ՀՎՀՀ 00065379

6.2 ԵՊՀ ԻՄ՝

Անուշավան Մակարյան
«Երևանի պետական համալսարան հիմնադրամի» Իջևանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար
ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան
Ուսանողական 3
«Արդշինբանկ»-ի Իջևանի մասնաճյուղ
Հ/Հ 247610017094
ՀՎՀՀ 01506928